

Աթոռի Յորելենական Յանձնաժողովին ուղարկած՝ դպրոցական ֆօնդի օգտին՝ քսան րուրլին։ 6 նոյեմբ., թ. 1713։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեցա. Լջմիածնի Սինօդին արձակելով Մայր Աթոռի ազարակի կառավարչի պաշտօնից Արշակ Դաւթեանին, Երևանի փոխ-թեմակալի միջնորդութեան համաձայն, կարգել ժամանակաւորապէս Խորվիրապի վանքի միաբան, իսկ ազարակի վերահսկող կարգել ժամանակաւորապէս վանական կառավարութեան անդամ Տ. Արիստակէ վարդապետին՝ ցառանձին տնօրէնութիւն Նորին Սրբութեան։ 10 նոյեմբ. թ. 1729։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՑՐՈՒԹԻՒՆՆԵՐ :

Կոնդակ Աղրիանուպօլսոյ Արսէն աւագ քահանայ Դերձակեանի անունով, որին, թեմի առաջնորդ Տ. Ղեոնդ եպիսկոպոս Դուրեանի միջնորդութեան համաձայն, լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 18 հոկտեմբերի, թ. 1613։

Կոնդակ Սուրամի Յովսէփ քահանայ Առիւծեանի անունով, որին, Վրաստանի Հայոց առաջնորդի և հոգաբարձութեան միջնորդութեան համաձայն, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց։ 30 հոկտեմբ., թ. 1682։

Կոնդակ Նոր-Նախիջևանի փոխանորդ Տ. Գէորգ վարդապետ Զէօրեքչեանի անունով, որին ծաղկեայ-մետաքսեայ կապտագոյն փիլոն կրելու իրաւունք տրուեց։ 1 նոյեմբերի, թ. 1692։

Կոնդակ Աշտարակի շրջանի գործակալ Մամբրէ քահանայ Տէր Պօղոսեանի անունով, որին Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի միջնորդութեան համաձայն, կամիլաւկա գլխարկ ծածկելու իրաւունք տրուեց։ 4 նոյեմբերի, թ. 1707։